ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

4. 11. 2024թ.

Քաջարան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ Տավուշի մարզի խորհրդի նիստի

04.11.2024թ.

1. Օրակարգի հաստատում

2. ՀՀ Տավուշի մարզի համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին

Զեկուցող՝ Գուրգեն. Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

3. ՀՀ Տավուշի մարզի համայնքների տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարողականի մասին/10 ամսվա կտրվածքով/:

Զեկուցող՝ Ասքանազ Բաբլումյան- ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

4. 2024թ. մայիսի 25-26-ի ջրհեղեղից տուժած համայնքների, տնտեսությունների և ֆիզիկական անձանց պատճառված վնասների վերականգնման աշխատանքների ընթացքի մասին:

Զեկուցող ՝ Աղաբեկ Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

5. Հ.Հովնանյան ընտանեկան հիմնադրամի հետ համագործակցությամբ Տավուշի մարզի համայնքներում իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

Զեկուցող՝ Աղաբեկ Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

6. Այլ հարցեր

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը:

Ներկա էին ՀՀ Տավուշի մարզի խորհրդի բոլոր անդամները:

Մասնակցում էին ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը, ստորաբաժանումների ղեկավարները:

1.Հաստատվեց ներկայացված օրակարգի նախագիծը

2. ՀՀ Տավուշի մարզի համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին

Զեկուցող՝ Գ. Հարությունյան – *ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ*

ՀՀ Տավուշի մարզի սուբվենցիոն ծրագրերի իրականացման և 2025 թվականին նախատեսվող ծրագրերի հայտերի ընթացքի մասին զեկուցողը նշեց, որ

2023թ. մարզի համայնքների կողմից մրցույթի է դրվել միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատված **15 ծրագիր և 1 ծրագիր 2022թ-ից տեղափոխված 4,2 միլիարդ դրամ** ընդհանուր արժեքով:

Նշված ծրագրերից **13-ը ավարտվել են,** իսկ **3 ծրագրեր** ավարտվել են մասսամբ, որոնց մի մասը տեղափոխվել է 2024 թվական:

Դրանք են. Խաչարձան գյուղի տուֆապատման, Թեղուտի ջրամատակարարման, և Իջևանի մի շարք փողոցների ասֆալտապատման աշխատանքները:

Խաչարձան գյուղի տուֆապատման և Թեղուտի ջրամատակարարման համակարգի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ Իջևանի ասֆալտապատոման աշխատանքներից մի քանի ենթածրագրերի աշխատանքները սկսվել կամ կսկսվեն առաջիկա օրերին:

2024 թվական է տեղափոխվել նաև 2022թ. հաստատված Դիլիջանի մշակույթի պալատի հիմնանորոգման և 2021 թվականին հաստատված Դիլիջանի 5 ԲԲՇ-ների էներգոարդյունավետ արդիականացման ծրագրերի շինարարական աշխատանքները: Մշակույթի պալատի հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են/ 80 %/, իսկ 5 ԲԲՇ-ների էներգոարդյունավետ արդիականացման ծրագրի շինարարական աշխատանքներն ավարտված են/ կան խնդիրներ/:

՝ Ինչպես ՀՀ ՏԿԵՆ-ի մասնագետների հետ համատեղ, այնպես էլ մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացվել են ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներ, որոնց արդյունքների վերաբերյալ կազմվել են համապատասխան տեղեկանքներ:

Մոնիտորինգների արդյունքում հայտնաբերվերվել են որոշ թերություններ, որոնք ենթակա են անհապաղ վերացման:

2024թ. Տավուշի մարզի համայնքներից մարզպետի աշխատակազմ է ներկայացվել թվով **27** սուբվենցիոն հայտ, որոնք արժանացել են միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանը:

Նշված ծրագրերից թվով 22-ը համայնքների կողմից կատարված որոշակի փոփոխություններից և լրամշակումներից հետո ամբողջական փաթեթներով մոտ **6.75 մլրդ.դրամ** ընդհանուր արժեքով ներկայացվել են ՀՀ ՏԿԵՆ/**2.374 մլրդ.դրամ համայնք, 4.246 մլրդ.դրամ ՀՀ կառավարություն, 29.2 մլն այլ ներդրողներ/**:

Առ այսօր **20** ծրագրեր հաստատվել են, մնացածը գտնվում են տարբեր փուլերում:

2025թ-ի համար Տավուշի մարզի համայնքներից մարզպետի աշխատակազմ է ներկայացվել թվով **20** սուբվենցիոն հայտ: Մոտ **6.75 մլրդ.դրամ** ընդհանուր արժեքով, որոնք համապատասխան շտկումներից հետո ներկայացվել են ՏԿԵՆ: /**2.687 մլրդ.դրամ համայնք, 5021 մլրդ.դրամ ՀՀ կառավարություն, 182 մլն այլ ներդրողներ/**:

Որոշվեց առաջարկել՝

- սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկում իրականացնող հանձնաժողովին, լինել հետևողական արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

- Համայնքների ղեկավարներին, բացառել հայտերի ներկայացման ժամկետների խախտման դեպքերը և աշխատանքներ տանել համայնքապետարանների համապատասխան մասնագետների որակավորման բարձրացման ուղղությամբ, որպեսզի կազմվող հայտերի փաթեթները որակյալ լինեն և հետ չվերադարձվեն:

3. ՀՀ Տավուշի մարզի համայնքների տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարողականի մասին/ 10 ամսվա կտրվածքով/

Զեկուցող՝ Ա. Բաբլումյան- ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Զեկուցողը նշեց, որ Մարզի համայնքների 2024թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմել է 8 մլրդ 972 մլն 882 հազ դրամ, որից սեփական եկամուտները՝ 2 մլրդ 126 մլն 962 հազ դրամ, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները կազմել են 6 մլրդ 831 մլն 388 հազ դրամ, որից՝ դոտացիան 5 մլրդ 267 մլն 512 հազ դրամ:

2024 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ընդհանուր եկամուտների կատարողականը կազմել է 79.4 % կամ հավաքագրվել է 7 մլրդ 123 մլն 863 հազ դրամ, իսկ սեփական եկամուտները՝ 1 մլրդ 431 մլն 630 հազ դրամ կամ կատարվել է 67.3 %-ով:

ՀՀ պետական բյուջեից սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումը կազմել է 1 մլրդ 430մլն 678 հազ դրամ կամ կատարվել է 78.6 %-ով:

Ըստ առանձին եկամտատեսակների նոյեմբերի 1-ի դրությամբ սեփական եկամուտների կատարողականներն ունեն հետևյալ տեսքը.

- անշարժ գույքի հարկ – նախատեսվել է 497 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 280 մլն դրամ, կամ կատարվել է 56.4 %-ով,

- գույքահարկ փոխադրամիջոցների համար - նախատեսվել է 783 մլն դրամ, հավաքագրվել է 481 մլն դրամ, կամ կատարվել է 61.4 %-ով,

- տեղական տուրքեր –նախատեսվել է 92 մլն դրամ, հավաքագրվել է 116 մլն դրամ, կամ կատարվել է 127 %-ով,

- գույքի վարձակալությունից եկամուտներ – նախատեսվել է 118 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 95 մլն դրամ, կամ կատարվել է 80.0 %-ով,

- տեղական վճարներ– նախատեսվել է 455 մլն դրամ, հավաքագրվել է 354 մլն դրամ, կամ կատարվել է 77.8 %-ով:

Սեփական եկամուտների եկամտատեսակների մեջ ամենացածր կատարողականն ունեն անշարժ գույքի հարկերը-56.4% և փոխադրամիջոցների գույքահարկը- 61.4 %:

Տասը ամսվա կտրվածքով սեփական եկամուտների թերհավաքագրումը կազմել է 696 մլն դրամ և համայնքների ղեկավարների ուշադրությունն ենք հրավիրում տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման վրա:

Սեպտեմբերի 12-ին համայնքներին է տրամադրվել ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծով համայնքներին հատկացվելիք դոտացիաների նախնական հաշվարկները և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն երկամսյա ընթացքում համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը պետք է ներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը:

Համայնքների ղեկավարներին առաջարկվում է օրենքով սահմանված ժամկետում ապահովել բյուջեի նախագծի քննարկումը:

Տավուշի մարզպետի աշխատակազմը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն ինչպես տեղական բյուջեների նախագծերի կազմման, այնպես էլ եկամուտների հավաքագրման գործընթացներում:

Որոշվեց առաջարկել՝

համայնքների ղեկավարներին, հետևողական լինել սեփական եկամուտների հավաքագրումը կատարելու ուղղությամբ և ապահովել 2024 թվականի համար սահմանված նշանակը:

4. 2024թ. մայիսի 25-26-ի ջրհեղեղից տուժած համայնքների, տնտեսությունների և ֆիզիկական անձանց պատճառված վնասների վերականգնման աշխատանքների ընթացքի մասին:

Զեկուցող՝ Ա. Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

«Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-ն որոշմամբ, աղետի հետևանքով Նոյեմբերյան և Դիլիջան համայնքների ֆիզիկական անձանց անհատական բնակելի տներին պատճառված վնասների համար տրամադրվել է 54,827,700 ՀՀ դրամ փոխհատուցում: Ներկայացվել է 18 դիմում, որից փոխհատուցում ստացել է 10 անձ, իսկ ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցներին պատճառված վնասների համար տրամադրվել է 29,201,000 ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն՝ ներկայացվել է 29 դիմում, աջակցությունը տրամադրվել է 25 անձի:

Գյուղատնտեսության և ոչ բնակելի տարածքների աղետի հետևանքով ֆիզիկական անձանց պատճառված վնասների հետ կապված խնդիրները կարգավորվում են 2024 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1264-Լ և 2024 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1298-Լ որոշումներով, իսկ տնտեսվարողների աջակցության տրամադրման հարցը՝ 2024 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1301-Լ որոշմամբ:

Ընդունվեց ի գիտություն:

5. ***Հ.Հովնանյան ընտանեկան հիմնադրամի հետ համագործակցությամբ Տավուշի մարզի համայնքներում իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:***

Զեկուցող՝ Աղաբեկ Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Ներկայացվեց, որ «Հ.Հովնանյան» ընտանեկան հիմնադրամի և Տավուշի մարզի միջև համագործակցության շնորհիվ մարզում իրականացվել է ոռոգման և խմելու ջրի համակարգերի կառուցման և արդիականացման սուբվենցիոն 10 ծրագիր:

Ընդհանուր ներդրումների քանակը կազմում է 1,4 մլրդ ՀՀ դրամ, որից 500 մլն. ՀՀ դրամը ներդրել է «Հ. Հովնանյան» ընտանեկան հիմնադրամը:

Ընդունվեց ի գիտություն:

6" Անդրադառնալով այլ հարցերի, մարզպետ Հայկ Ղալումյանը տեղեկացրեց, որ ԱԺ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացվել է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծային փաթեթը:

Համայնքների ղեկավարներին առաջարկվեց՝

վերլուծել խնդրի առնչությամբ առկա իրավիճակը, ուսումնասիրել քաղաքային և գյուղական բնակավայրերում հարցի առանձնահատկությունները:

Ըստ համայնքների մոտավոր հաշվառում իրականացնել թափառող շների թվաքանակի վերաբերյալ, փորձել տեղորոշել վերջիններիս սննդի կուտակման գոտիներն ու սննդային շղթան, ուրվագծել բնակավայրի ներսում թափառող շների միգրացիոն շարժը՝ թիրախային համարելով բնակչության նկատմամբ առավել ագրեսիվ և վտանգավոր վարքագիծ ունեցող շների ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

ՄԱՐԶՊԵՏ **ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

2024-11-13 09:03:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից